

gnamenti di Neagoe Basarab a suo figlio Teodosio) o sulla fama assunta dall'eroe albanese Skandelberg.

Non vengono tralasciate anche interpretazioni di «profezie» che annunciavano la caduta degli Ottomani (cfr. p. 83).

A. Pippidi ha studiato ed esposto con chiarezza la genesi di una crociata anti-ottomana che si concretizzò anche dopo la battaglia di Lepanto, raggiungendo fasi intense di solidarietà anti-islamica.

«Nel 1571 — si legge — si riceveva a Venezia un messaggio da parte di Alexandru Voda Mircea, grazie al quale i capi della Lega Santa erano informati che le Terre romene, la Moldavia e la Transil-

vania erano pronte a prendere le armi, con l'aiuto dei Bulgari, dei Serbi e dei Bosniaci» (p. 174). Questo anelito contro il turco si sotto-linea anche più avanti ove si afferma: «Il principe giura di versare il suo sangue per la fede, gli obituari conservano i nomi dei boiardi uccisi combattendo il Turco infedele...» (p. 269). Nell'ultimo capitolo, l'autore considera la dominazione fanariota, ma altresì il logorio dell'ideale bizantino sotto Brîncoveanu.

Il libro possiede 45 tavole, comprese nel testo, raffiguranti personaggi storici, documenti o icone dell'epoca.

GIUSEPPE MUNARINI

ASIA OCCIDENTALE

di

GIORGIO VERCELLIN

Coll. «Popoli nel Mondo», Ist. Geografico De Agostini, Novara, 1983, pp. 120.

Հռչակաւոր Տէ Ակոսթինի աշխարհագրութեան մատնագէտ հիմնարկի տպարանէն շքեղ հրատարակութեամբ լոյս տեսած է «Աշխարհի Ժողովուրդներ» շարքի վերջին հատորը: Գումնաւոր տպագրութեամբ եւ խնամուած կազմով արժեքաւորուած է այս հետաքրքրական եւ մեծադիր աշխատանքին որակը:

Մասնաւոր բաժին մը յատկացուած է հայ Ժողովուրդին, գեղատիպ լուսանկարներով եւ մանրամասն տեղեկութիւններով:

Հակառակ այն պարագային՝ որ հատորը պատրաստուած է ըստ ծաւալում գտնելու համար — ոչ մասնագիտական —, հեղինակը յաջողած է քիչ էջերու մէջ խտացնել՝ լուրջ մեթոդականութեամբ՝ հայ Ժողովուրդի պատմութեան եւ ներկայ ընկերաքաղաքական վիճակին զանազան ծալքերը:

Բացի Հայաստանի պատմական քարտէսէն, ուր նշուած է նաեւ Սոփիտական Հայաստանի ներկայ տարածքը, զանազան լուսանկարներ կը զարդարեն Հայոցութեան նուիրուած էջերը (70-75) մեր հայրենի բնութեան եւ կոթողներուն նշանակալից տեսարաններով: Գեղարդի ընդհանուր տեսքը, Վենետիկի Ս. Ղազարի Մխիթարեան Մայրավանքին քառանկիւնը՝ գաղափար մը կու տան ընթերցողին հայ Ժողովուրդի մշակութային եւ հոգեւոր պատմական կեդրոններու մասին:

Գործին հասկնալի և թէ՛ հայաբնակ Միջին Արեւելքի ալ ծանօթ է Վերջելին: Նոր Զուլայի Հայոց եկեղեցիին նկարը, քաղաքի հեղինակին կողմէ, եւ Շահ Աբբասի հալածական քաղաքականութեան վերաբերեալ էջերն ալ կը հաստատեն այս իրողութիւնը:

Աշխատանքին ընկերաքաղաքական մասին մէջ նշելի է հեղինակին համոզարտ եւ գիտական մեթոդականութիւնը՝ Հայոց Դատին նաեւ վերջին տասնամեակի ընթացքին արձանագրած հանգրուաններուն, որուն կը յաջորդէ հեղինակին անձնական տեսութեան ալ արտայայտութիւնը, Հայկական Հարցին խաղաղ ճամբաներով արծարծման եւ լուծման անհրաժեշտութեան մասին:

Նոյն տրամաբանական գիծով վերլուծումներ կատարուած են նաեւ Սփյուռքի կան Միութեան (Ժամանակակից Կովկասի) մէջ բնակող հայերու հողային հարցերուն նկատմամբ, օրինակ բերելով Ղաթաբաղի պարագան:

Գիտական կազմովը, ծանօթագրութիւններովը, բացատրական լեզուովը եւ ճշգրտութեան տեսանկէսէն, շնորհաւորելի աշխատանք մըն է Վերջելիի գործը: Անշուշտ Հայրուն ախրալ պիտի փափաքէր՝ որ աւելի ընդարձակ ըլլային հայ Ժողովուրդին նուիրուած էջերը:

Հատորին ներկայացման առիթը կը պատկանին Վենետիկի Պետական Համալսարանի դասախօս, հայ Ժողովուրդի ծանօթ ու համակիր՝ Գրոֆ. Ըմբրոսիոս թոյ Սքարչիայի:

Աշխատանքը հարուստ պաշարով մը կը ներկայանայ ընթերցողին, բացի Հայրենի, Կովկասեան եւ մասնաւոր Տաղքոստի Ժողովուրդներուն ալ կենցաղին, պատմութեան եւ ներկայ վիճակին շուրջ: Լայն քաղաքացիական արդարեւ ներդրումներ, Քաղաքի եւ Լառաքի ազգութիւններու մասին: Նկատի առած՝ Արեւմտեղի մէջ այս ուղղութեամբ ծանօթութիւններու գրեթէ ամբողջական պակասը, յոյժ չահաւէտ կարելի է համարիլ այս գործը: Տիտղոսն ալ քննին շատ խոսուն է եւ գրեթէ խթանիչ՝ Արեւմտեղեան Ասիա: Հատորը յանձնարարելի է բոլոր անոնց, որոնք կը հետեւին հայ Ժողովուրդի նկատմամբ ոչ հայերու կողմէ կատարուած հրատարակութիւններուն: Անշուշտ իտալեբէն լեզուի ծանօթութիւնը կը մնայ անհրաժեշտ:

ՊԱՅՔԱՐ ՍՎԱՋԼԵԱՆ